7737

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք․

# ՀԱՄ. Կ(Բ)Կ ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ IV ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

2–4 փետրվարի, 1936 թ.

ЗКП2(47.92)
Հ-22

[illegible]ՍՀՐԱՏ — ԲԱԳՈՒ — 1936

Арм.
Չ-5612а
ЗКП2(17.92)
Հ-22
24 SEP 2006
1 DEC 2009

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

# ՀԱՄ. Կ(բ)Կ ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ IV ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

2-4 ՓԵՏՐՎԱՐԻ 1936 Թ.

1. Անդրկովկասի կուսկազմակերպությունների կուսակցական փաստաթղթերի ստուգման հանրագումարների մասին.

   Համ. Կ(բ)Կ Անդրյերկոմի քարտուղար ընկ. Ս. Կուդրյավցևի զեկուցման բանաձևը, ընդունված 1936 թ. փետրվարի 4-ին:

2. Ստախանովյան շարժման զարգացման առընչությամբ Ադրբեջանի նավթային արդյունաբերության աշխատանքի մասին.

   Ազնեֆթեկոմբինատի վարիչ ընկ. Սլուցկու, Կովկասի նավթահանքերի բանվորների Միության կենտկոմի նախագահ ընկ. Մաշկեվիչի, Ադրկոմկուսի (բ) կենտկոմի քարտուղար ընկ. Ակոփովի զեկուցումների բանաձևը՝ ընդունված 1936 թ. փետրվարի 4-ին

Инв. № 14838

ԱԴՐԿՈՒՍՀՐԱՏ
ԲԱԳՈՒ — 1936

18 SEP 2013

7737

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

40780-63

# ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐՈՒՄ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ՀԱՄ. Կ (Բ) Կ ԱՆԴՅԵՐԿՈՄԻ 4-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԸ 1936 Թ. 4 ՓԵՏՐՎԱՐԻ

Կուսակցության անդամների յեվ թեկնածուների կուսակցական փաստաթղթերի ստուգումը, վոր անցկացվեց ընկեր Ստալինի նախաձեռնությամբ՝ Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1935 թվի մայիսի 13-ի վորոշման հիման վրա, ցույց տվեց, վոր Անդրկովկասյան կուսկազմակերպությունները հանդիսանում են առողջ, ամուր, մարտունակ կազմակերպություններ, համախմբված կուսակցության գլխավոր գծի, Համկոմկուսի (բ) Կենտկոմի և կուսակցության առաջնորդ մեծ Ստալինի շուրջը:

Միաժամանակ Անդրյերկոմի պլենումը նշում է, վոր կուսփաստաթղթերի ստուգումն Անդրկովկասի կուսակցական կազմակերպություններում լիովին հաստատեց այն ցուցմունքները, վոր տրված եյին Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1935 թվի մայիսի 13-ի նամակում կուսակցական փաստաթղթերի տրման ու պահպանման գործում և կուսակցության անդամների ու թեկնածուների հաշվառքի ղեկավարում յեղած անկանոնությունների մասին:

Անդրկովկասի առանձին կուսակցական կազմակերպություններում ստուգումը բացեց կազմակերպչական

թափթփվածության, կուսակցական տնտեսության մեջ անկանոնության, առանձին կոմունիստների, իսկ յերբեմն նաև ամբողջ կուսակցական կազմակերպությունների կողմից բոլշևիկյան զգաստության բթացման փաստեր:

Ստուգումը հայտնաբերեց կուսակցության կանոնադրության կոպիտ խախտման փաստեր նոր անդամների ընդունելության ժամանակ: Ընդունելությունը կուսակցության մեջ, այդ թվում նաև ուրիշ կուսակցություններից դուրս յեկածների ընդունելությունը, շատ դեպքերում կատարվել է առանց անհատական ընտրության, առանց սահմանված կանդիդատների պահպանման, առանց համապատասխան յերաշխավորությունների և համապատասխան կուսակցական մարմինների հաստատման: Ստուգումը բացեց կուսակցական փաստաթղթեր տալու պարզեցրած պրակտիկայի փաստեր: Կուսակցական փաստաթղթերի ստուգումը հայտնաբերեց, վոր կուսակցական կազմակերպությունների ղեկավարները կուսակցության նոր անդամների ընդունելության, կուսակց. փաստաթղթերի պահպանման, կոմունիստների հաշվառման և այլն կարևորագույն պարտականությունները շատ հաճախ վերապահել են ապարատի տեխնիկական աշխատողներին, այն էլ հաճախ անուշադիր ընտրվածներին, քաղաքականապես չստուգվածներին և դրանով էլ խախտել են բոլշևիկյան սկզբունքները, յերբ կուսակցության ղեկավար կազմակերպիչներն անձամբ զբաղվում էին քրտնաջան կազմակերպչական աշխատանքով, ուսումնասիրում էին կազմակերպության կազմը, իրենք էին տալիս կուսակցական փաստաթղթեր տալը, մտնում էին կուսակցական տեխնիկայի բոլոր մանրամասնությունների մեջ: Ստուգումը հայտնաբերեց, վոր այդ բոլորի հետևանքով առանձին դասակարգայնորեն խորթ, թշնամի տարրերին, ժուլիկներին ու աֆերիստներին, ոգտվելով կոմունիստների ու կուսակցական կազմա-



կերպությունների անբավարար զգաստությունից, և կուսակցական տնտեսության մեջ յեղած անկանոնություններից, հաջողվել է դանազան մեքենայությունների միջոցով սողոսկել կուսակցական կազմակերպությունների շարքերը:

Կուսակցական փաստաթղթերի ստուգումն առանձին կուսակցական կազմակերպություններում լուրջ թերություններ է բացել կուսակցական աշխատանքի դրվածքում:

Պլենումը նշում է, վոր կուսակցության անդամների ու թեկնածուների կուսակցական փաստաթղթերի ստուգումն Անդրկովկասյան կուսակցական կազմակերպություններում կարևորագույն կազմակերպչական քաղաքական միջոցառում է հանդիսացել՝ կուսակցական կազմակերպությունների շարքերի հետագա ամրացման նկատմամբ:

Կուսակցական փաստաթղթերի ստուգման հետևանքով Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունները մաքրեցին իրենց շարքերը թշնամի ու խորթ տարրերից, յերկերեսանիներից, վոր խարեբայությամբ մտել էին կուսակցության մեջ և կուսակցության անդամի բարձր կոչումը չարդարացնող անձնավորություններից: Կուսակցական կազմակերպությունները զգալի չափով հաղթահարել են կազմակերպչական թափթփվածության տարրերը և կարգի յեն բերում իրենց կուսակցական տնտեսությունը: Կուսակցական մարմիններն ամրացել են ի հաշիվ անպետք և անընդունակ աշխատողներից իրենց մաքրման և նոր կադրերի կուսակցական աշխատանքի առաջքաշման: Կուսակցական կազմակերպություններում բարձրացել է զգաստությունը և բոլշևիկյան կարգապահությունը: Կուսակցական փաստաթղթերի ստուգումը նպաստել է Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների կազմակերպչա-կուսակցական և դաստիարակչական աշխատանքի զգալի կերպով բարելավմանը:

Համկոմկուսի (բ) Անդրյերկրկոմի պլենումը գտնում է, վոր համապատասխան Համկոմկուսի (բ) Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի ցուցմունքների, Անդրկովկասի կուսկազմակերպությունները մինչև վերջ պետք է յուրացնեն կուսփաստաթղթերի ստուգումից բխող դասերը, վորովհետև «միայն այդ դասերը յուրացնելով և հետևողականորեն կատարելով Համկոմկուսի (բ) Կենտկոմի բազմիցս ցուցմունքները հեղափոխական բոլշևիկյան զգաստության ամեն կերպ բարձրացման և «մեր կազմակերպչական աշխատանքի մակարդակը քաղաքական ղեկավարության մակարդակին հասցնելու» անհրաժեշտության մասին, կուսկազմակերպությունները կարող են մինչև վերջ արմատախիլ անել օպորտունիստական բարեհոգության արմատները, սրել կուսակցության անդամների բոլշևիկյան զգաստությունը, կուսակցական ապարատը դաստիարակել բոլշևիկյան սրության և անհաշտվողականության վոգով ու հասնել այն բանին, վոր կուսակցության կանոնադրությունը իսկապես դառնա նրա ներքին կյանքի անխորտակելի հիմքը»:

Համկոմկուսի (բ) Անդրյերկրկոմի պլենումը վորոշում է·

1. Կուսակցական փաստաթղթերի ստուգման յեվ կուսակցական կազմակերպությունների կուսակցական տնտեսության կարգավորման համար Համկոմկուսի (բ) Անդրյերկրկոմի բյուրոյի կատարած աշխատանքին հավանություն տալ և հաստատել:

2. Հանձնարարել հանրապետությունների կենտկոմներին, մարզկոմներին, քաղկոմներին, շրջկոմներին, Անդրկովկասյան յերկաթուղու, Կասպարի, Զակժելդորտրոյի, Սև ծովի նավագնացության և Ոդատորմի քաղբաժիններին՝ ամենամոտ որերս ավարտել այն կոմունիստների կուսակցական փաստաթղթերի ստուգման ակտերի ներկայացնելը Համկոմկուսի (բ) Անդրյերկրկոմ, վորոնք դեռ չեն անցել



ստուգումը, նույնպես և անճշտությունների նկատմամբ լրացուցիչ ակտերի ձևով ուղղված սխալները, վոր հայտնաբերել է Համկոմկուսի (բ) Կենտկոմը Անդրկովկասի կուսակցական փաստաթղթերի ստուգման ակտերը նայելիս: Դրա հետ միաժամանակ մինչև փետրվարի 15-ը լիովին ավարտել կուսակցությունից հեռացվածների բոլոր բողոքի դիմումների քննարկումը:

3. Համկոմկուսի (բ) Անդրյերկրկոմի պլենումը պարտավորեցնում է Անդրկովկասի բոլոր կուսակցական կազմակերպություններին՝ անհապաղ անցնել կուսակցական փաստաթղթերի (կուսակցական տոմսերի, թեկնածուական և հաշվառման քարտերի) առաջիկա փոխանակման մանրազնին նախապատրաստական աշխատանքի ծավալմանը, այնպես, վոր կուսակցական փաստաթղթերի փոխանակումը լիովին օգտագործվի ստուգման դրական արդյունքների ամրացման և կուսակցական կազմակերպությունների շարքերի հետագա ամրապնդման համար:

Հանձնարարել հանրապետությունների կենտկոմներին կուսակցական փաստաթղթերի փոխանակումից առաջ անցկացնել մարզկոմների, քաղկոմների և շրջկոմների քարտուղարների հատուկ խորհրդակցություններ՝ այդ աշխատանքի կատարման կարգի մասին մանրակրկիտ կերպով նրանց հրահանգելու համար: Համկոմկուսի (բ) Կենտկոմի հրահանգի համապատասխան սահմանել, վոր կուսակցական փաստաթղթերի փոխանակումն ինքնավար մարզերի ու հանրապետությունների (Աբխազիա, Աջարստան, Հարավ-Ոսեթիա, Լեռնային Ղարաբաղ և Նախիջևան) կուսակցական կազմակերպություններում կատարվում է մարզկոմների առաջին քարտուղարների կողմից անձամբ, իսկ սակավաթիվ շրջանների և այն շրջանների կուսակցական կազմակերպություններում, վորտեղ շրջկոմների քարտուղարները դեռ չեն հաստատվել Համկոմկուսի (բ) Կենտկոմի կողմից, կուսակցական տոմսերի փոխանա

կումը կատարվում ե անմիջականորեն կենտրոնների և համապատասխան քաղկոմների քարտուղարների կողմից: Վորովհետև նոր ձևի կուսակցական տոմսերի և թեկնածուական քարտերի հանձնումը կատարվելու յե միայն հին ձևի կուսակցական տոմսերի և թեկնածուական քարտերի փոխարեն, պարտավորեցնել ազգային կոմկուսների կենտկոմներին՝ մինչև փետրվար ամսի վերջը կազմակերպել կուսակցական տոմսերի և թեկնածուական քարտերի հանձնումն այն կոմունիստներին, վորոնք չունեն հին ձևի իսկական կուսակցական փաստաթղթեր:

4. Կուսակցական փաստաթղթերի փոխանակումն անցկացնելիս կուսակցական կազմակերպությունները պետք ե անշեղորեն ղեկավարվեն Համկոմկուսի (բ) Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի ցուցմունքներով՝ այն մասին, վոր «Կուսակցական տոմսերի, թեկնածուական քարտերի և հաշվառման քարտերի փոխանակումը կատարել խիստ անհատական կարգով այնպես, վոր փոխանակման հետևանքով որինակելի կերպով դրվի կոմունիստների հաշվառման և ուսումնասիրության ամբողջ գործը: Դրա հետ հարկավոր ե նկատի ունենալ, վոր կուսակցական տոմսերի փոխանակման ժամանակ կուսակցական կազմակերպությունները կարող են և կուսակցական տոմս չտալ կուսակցության անդամներից վոմանց, թեկուզ և նրանք անցած լինեն կուսակցական փաստաթղթերի ստուգումը, յեթե կուսակցության այդ անդամները չեն արդարացնում կուսակցության անդամի բարձր կոչումը»: Կուսակցական փաստաթղթերի փոխանակման համար կոմունիստներին շրջկոմ կանչելիս, շրջկոմների քարտուղարները պետք ե ստուգեն նրա մասին յեղած բոլոր տվյալները՝ համաձայն կուսակցական փաստաթղթերի ստուգման ակտի, պարզել անձամբ նրա մոտ և կուսակցական կազմակերպության մոտ, վորտեղ նա հաշվի յե առնված, թե վորքան ե արդարացնում նա կուսակցու-



թյան անդամի բարձր կոչումը և նրան Համկոմկուսի (բ) շարքերում թողնելու նպատակահարմարության մասին կասկածները բացակայելու դեպքում, տալիս են նրան նոր կուսակցական տոմս և նրա համար լրացնում են հաշվառման և հաշվետվության փաստաթղթերը: Իսկ այն դեպքում, յերբ շրջկոմի քարտուղարը հնարավոր չի համարում կուսակցական տոմսի փոխանակումը կատարել և անհրաժեշտ ե գտնում հարց հարուցել կուսակցության անդամին կամ թեկնածուին Համկոմկուսի (բ) շարքերից հեռացնելու մասին, նա նրանից վերցնում ե կուսակցական փաստաթղթերը և իր առաջարկը մտցնում ե շրջկոմի բյուրոն ի հաստատություն:

5. Վորովհետև կուսակցական փաստաթղթերի փոխանակումը տրանսպորտային կուսակցական կազմակերպություններում պետք ե կատարեն շրջկոմների ու քաղկոմների քարտուղարները, վորոնց տերիտորիայում գտնվում են համապատասխան տրանսպորտային կազմակերպությունները, Անդրյերկոմի պլենումը պարտավորեցնում ե յերկաթուղու քաղբաժնի և Զակժելդորտրանսի, Կասպարի, Սև ծովի նավագնացության և Ողատորմի քաղբաժիններին՝ կատարել կուսակցական փաստաթղթերի փոխանակման ամբողջ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքը և միաժամանակ պարտավորեցնում ե կուսակցության տերիտորիալ քաղկոմներին ու շրջկոմներին՝ իրենց կողմից ձեռք առնել տրանսպորտային կուսակցական կազմակերպություններում կուսակցական տոմսերի փոխանակման աշխատանքի աջող կատարումն ապահովող բոլոր անհրաժեշտ միջոցները:

6. Անդրյերկոմի պլենումն առաջարկում ե Անդրկովկասի բոլոր կուսակցական կազմակերպություններին՝ կազմակերպել կուսակցության մեջ նոր ընդունելության ուշադիր նախապատրաստումը, ղեկավարվելով Համկոմկուսի (բ) Կենտկոմի դեկտեմբերյան պլե

նամի այն ցուցմունքով, որ «Համկոմկուսի մեջ նոր անդամների ընդունելության ժամանակ կուսակցական կազմակերպությունները պետք է ընտրեն կուսակցության մեջ իսկապես առաջավոր, իսկապես բանվոր դասակարգի գործին նվիրված, մեր յերկրի լավագույն մարդկանց, առաջին հերթին բանվորներից, նույնպես և կոլտնտեսականներից ու աշխատավոր ինտելիգենցիայից, վորոնք ստուգված են սոցիալիզմի համար մղվող պայքարի զանազան տեղամասերում, այնպես, վորպեսզի ե՛լ ավելի ամրացվի Համկոմկուսի (բ) շարքերը և ե՛լ ավելի ընդարձակվի կուսակցության կապերը մասսաների հետ»։ Կուսակցության մեջ ընդունելը պետք է կատարվի խիստ համապատասխան կուսակցության կանոնադրությանը, անպայման անհատական կարգով, յուրաքանչյուր ընդունվողի նախորոք մանրազննին ուսումնասիրությամբ՝ ինչպես սկզբնական կուսակցական կազմակերպությունների, այնպես էլ շրջկոմների կողմից։

7. Պլենումն առաջարկում է բոլոր կուսակցական կազմակերպություններին՝ բարելավել համակրողների հետ տարվող աշխատանքը, ուժեղացնել կուսակցությանը մոտիկ կանգնած վոչ կուսակցական բոլշևիկների, ստախանովականների, բանվորների ու բանվորուհիների, կոլտնտեսականների ու կոլտնտեսուհիների և աշխատավոր ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչների ներգրավումը համակրողների խմբակների մեջ, համակրողների խմբակներ ստեղծելով այն կուսակցական կազմակերպություններին կից, վորտեղ նրանք դեռ կազմակերպված չեն և վորոնք կարող են ապահովել կուսակցության նոր ռեզերվի բոլշևիկյան դաստիարակությունը։ Համակրողները կուսակցության իսկական ռեզերվ կլինեն միայն այն ժամանակ, յերբ կուսակցական կազմակերպություններն աշխատեն համակրողների հետ, ուսումնասիրեն նրանցից յուրաքանչյուրին, ստուգելով նրանց աշխատանքի մեջ։ Համակրողների



մեջ տարվող աշխատանքին կուսակցական կազմակերպությունները պետք է մոտենան վոչ թե ձևականորեն, վոչ թե այն սահմանափակելով միայն համակրողների դասընթացներում ընդգրկելով և նրանց մեջ ծավալելով կուսակցական պրոպագանդան։ Անհրաժեշտ է կոնկրետ հանձնարարություններ տալ համակրողներին, ստուգել նրանց գործնական աշխատանքում, դաստիարակել նրանց մեջ բոլշևիկյան վորակ ու հատկություն, վորպեսզի նրանցից պատրաստենք լենինյան կուսակցության արժանի անդամներ։

8. Անդրյերկոմի պլենումը գտնում է, վոր արմատապես պետք է փոփոխել այն պրակտիկան, վոր տեղի յե ունեցել անցյալում կուսակցության աճման համար լուրջ ռեզերվ հանդիսացող լենինյան կոմյերիտմիությունից լավագույն մարդկանց կուսակցության մեջ ներգրավելու նկատմամբ։ Ընդհակառակը պետք է վերջ տալ կոմյերիտականներին կամպանիոն ձևով կուսակցության մեջ ընդունելուն։ Յուրաքանչյուր կոմյերիտական իր աշխատանքով պետք է նվաճի կուսակցության անդամ լինելու իրավունքը։ Յուրաքանչյուր ազնիվ, սոցիալիզմի գործին նվիրված բանվոր ու կոլտնտեսական, այդ թվում նաև կոմյերիտական, կատարյալ հնարավորություն ունի իր աշխատանքով, իր վարքով, բանվոր դասակարգի գործին իր նվիրվածությամբ ցույց տալ, վոր նա արժանի յե լինել կուսակցության մեջ, յեվ այն ժամանակ կուսակցական կազմակերպությունը խիստ անհատական ձևով, ուշադիր ստուգումից հետո, պետք է ընդունի նրան կուսակցության շարքերը։ Այդ կապակցությամբ Անդրյերկոմի պլենումը պարտավորեցնում է կուսակցական կազմակերպություններին՝ զգալի չափով ուժեղացնել կուսակցական կազմակերպությունների ղեկավարությունը կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքի նկատմամբ, մեծ օգնություն ցույց տալ կոմյերիտական

կազմակերպություններին՝ երիտասարդական մասսաների կոմունիստական դաստիարակության գործում

9. Պլենումը գտնում է, որ կուսփաստաթղթերի ստուգումը տվել է կազմակերպչա–քաղաքական ահագին նյութ կուսակցական կազմակերպությունների աշխատանքի համար, կուսակցական աշխատանքի բոլոր բնագավառները բարելավելու համար:

Պլենումը գտնում է, որ կուսակցական աշխատանքի ծավալման գործում հետագայում կուսակցական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում պիտի լինի.

ա) կուսակցության բոլոր անդամների ու թեկնածուների ներգրավումը կուսակցական ակտիվ աշխատանքի, առաջադրությունների ճիշտ բաշխումը և կոմունիստների կողմից նրանց կատարման ստուգումը, յուրաքանչյուր առանձին կոմունիստի հետ աշխատանքի ավելի լավ կազմակերպումը:

բ) Պայքար կուսակցության յուրաքանչյուր անդամի ու թեկնածուի կողմից կոմունիստի՝ կուսակցության կանոնադրության 2–րդ կետով սահմանված պարտավորություններն անշեղ կերպով իրագործելու համար:

գ) Կուսակցական աշխատանքի բոլոր ձևերի բարելավումը (կուսակցական ժողովների, կուսակցական բեռնավորումների, անդամավճարների գանձման կարգի, կուսորգանների որոշումների կատարման ստուգման և այլն):

10. Մարքսիստական – լենինյան ուսուցման և կոմունիստների գաղափարական – քաղաքական ու կուլտուրական մակարդակի բարձրացման բնագավառում Անդրկովկասի կուսկազմակերպությունների աշխատանքի մեջ եղած աջողությունների հետ միասին, կուսակցական փաստաթղթերի ստուգումը հայտնաբերել է դաստիարակչական աշխատանքի լրջորեն հետ մնալը առանձին կուսկազմակերպություններում,



մարքսիստական – լենինյան ուսուցման դեռ անբավարար վիճակը, մանավանդ գյուղական կուսկազմակերպություններում և անգրագետ ու կիսագրագետ կոմունիստների զգալի խմբերի առկայությունը Անդրկովկասի կուսկազմակերպություններում:

Անդրերկրկոմի պլենում պարտավորեցնում է հանրապետությունների կենտկոմներին, մարզկոմներին, քաղկոմներին ու շրջկոմներին՝ կազմակերպել հատուկ հանրակրթական դպրոցներ ու խմբակներ այբբենական անգրագետ և կիսագրագետ կոմունիստների համար, այնպես, որ Անդրկովկասյան կուսկազմակերպություններում մեկ ամսվա ընթացքում լիովին վերացվի կոմունիստների այբբենական անգրագիտությունը: Մարքսիստական – լենինյան ուսուցման վիճակի հետագա բարելավման նպատակով՝ մինչև մարտի 1–ը վերջացնել պրոպագանդիստների կազմի վերանայումը բոլոր կուսկազմակերպություններում, պրոպագանդիստական աշխատանքից հեռացնել իրենց կոչմանը չհամապատասխանող անձերին, լրացնել պրոպագանդիստների կադրերը նոր, պատրաստված աշխատողներով, վերանայել քաղդպրոցների ու խմբակների ցանցի համալրումը և ապահովել կոմունիստների ճիշտ բաշխումը զանազան տիպի դպրոցներում՝ համաձայն կոմունիստների գիտելիքների մակարդակի ու լեզու իմանալու: Ավելի լայն ծավալել պրոպագանդիստների կադրերի պատրաստման և վերապատրաստման աշխատանքը պրոպագանդիստների դպրոցի միջոցով ու ապահովել շրջկոմների, մարզկոմների ու քաղկոմների սիստեմատիկ ղեկավարությունը կոմունիստների գաղափարա – քաղաքական մակարդակի բարձրացման ամբողջ աշխատանքի նկատմամբ: Կուսկազմակերպությունները պետք է ամենամանրազնին ու խոր աշխատանք շարունակեն կուսկազմակերպություններում ուսումնասիրելու կուսակցության պատմությունը և ընկ. Բերիայի՝

«Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի առթիվ» զեկուցումը: Միաժամանակ ե՛լ ավելի խոր պետք է կազմակերպել անդրկովկասյան կուսկազմակերպությունների պատմության հարցի մշակման աշխատանքը:

11. Կուսակցական փաստաթղթերի ստուգումը հայտնաբերել է կուսակցական աշխատանքի թույլ դրվածքը առանձին կուսկազմակերպություններում (Ախալքալաքի, Նախիջևանի, Կիրովաբադի, Լենինականի կուսկազմակերպությունները և շրջանային այլ կազմակերպություններ), նույնպես և կուսկազմակերպությունների աշխատանքի առանձին տեղամասերում սակավաթիվ, միայնակ-կոմունիստներ):

Դրա կապակցությամբ Անդրյերկոմի պլենումը հավանություն է տալիս Հանրապետությունների կենտկոմների կողմից կիրառվող միջոցառումներին՝ առանձին կուսկազմակերպություններն ամրապնդելու համար, և նրանց հանձնարարում է գործադրել բոլոր հետագա անհրաժեշտ միջոցառումները նրանցում կուսակցական աշխատանքը բարձրացնելու համար: Հանրապետությունների կենտկոմները պետք է հատուկ միջոցներ կիրառեն սակավաթիվ, 100–120 կոմունիստից պակաս ունեցող շրջանային կազմակերպություններն ամրապնդելու համար, միաժամանակ մշակելով այդ կուսկազմակերպությունների աշխատանքի սիստեմի հարցը: Քաղկոմները, շրջկոմները և մարզկոմները պետք է առանձին ուշադրություն դարձնեն սակավաթիվ սկզբնական կազմակերպությունների ղեկավարությունն ուժեղացնելու վրա, հաշվի առնելով, որ կուսփաստաթղթերը ստուգելիս սակավաթիվ կուսկազմակերպություններում հայտնաբերվել են կուսակցության շարքերի ամենաշատ աղտոտումը և կուսակցական աշխատանքի թույլ դրությունը: Ավելի լավ կազմակերպել միայնակ – կոմունիստների աշխատանքի ղեկավարությունը, կանոնավոր կերպով հրավիրել միայնակ-կոմունիստների խորհրդակցություններ ու դասընթացներ՝ հրահանգելու և նրանց մարքսիստական – լենինյան ուսուցման համար: Աշխատանք տանել միայնակ կոմունիստների քանակը կրճատելու ուղղությամբ՝ նրանց մտցնելով գոյություն ունեցող սկզբնական կազմակերպությունների մեջ այնտեղ, որտեղ դա կապված չէ արտադրական սկզբունքի խախտման հետ, նույնպես և կուսակցական-կոմերիտական խմբակների ցանցի կազմակերպման ու ընդլայնման միջոցով:

12. Մասնանշելով այն մեծ աշխատանքը, որ կատարել են Անդրկովկասի կուսկազմակերպությունները կուսակցական կադրերի ամրապնդման և ընտրության ու կադրերի ռեզերվ հայտնաբերելու նկատմամբ կուսփաստաթղթերի ստուգման ժամանակ, Անդրերկոմի պլենումը հանձնարարում է հանրապետությունների կենտկոմներին, մարզկոմներին ու քաղկոմներին՝ շարունակել մանրազնին ուսումնասիրել կուսփաստաթղթերի ստուգման ընթացքում հայտնաբերած նոր ռեզերվը և կազմակերպել նրա պատրաստման ու դաստիարակման աշխատանքը: Շրջկոմների, քաղկոմների ու մարզկոմների քարտուղարները պետք է անձամբ ղեկավարեն ռեզերվի հետ տարվող աշխատանքը, օգնություն ցույց տալով նրա աշխատանքի և ուսուցման մեջ, մասնակից անելով նրան կուսակցական առանձին առաջադրությունների կատարմանը, համարձակորեն առաջ քաշելով նոր կադրերը կուսակցական, խորհրդային և տեխնիկական ղեկավար աշխատանքի: Պլենումը պարտավորեցնում է կենտկոմներին, մարզկոմներին, քաղկոմներին, շրջկոմներին և քաղբաժիններին՝ օգտագործել կուսակցական փաստաթղթերի առաջիկա փոխանակումն՝ աշխատողների նոր կադրերի հետագա, ավելի շատ հայտնաբերման համար:

Պարտավորեցնել հանրապետությունների կենտ-

կոմներին՝ կուսակցական – տնտեսական ակտիվի վերապատրաստման դասընթացներում տեղերի 15–25 հազար հատկացնել այդ դասընթացների միջոցով կադրերի հայտնաբերված ռեզերվը պատրաստելու և վերապատրաստելու համար: Միաժամանակ կենտկոմները, մարզկոմները և քաղկոմները պետք է միջոցներ ձեռք առնեն կուսկադրերի հետ տարվող աշխատանքի հետագա բարելավման համար: Կազմակերպել կադրերի, առանձնապես սկզբնական կուսկազմակերպությունների կադրերի ե՛լ ավելի խնամքով ընտրություն, միջոցներ ձեռք առնել կուսակցական կադրերի հոսունության հետագա դադարեցման համար և 1936 թվի ընթացքում ավելի լայնորեն կազմակերպել, քան այդ յեղել է առաջ, կուսակցական կադրերի, մանավանդ սկզբնական կուսկազմակերպությունների կադրերի վերապատրաստումը:

13. Համկոմկուսի (բ) Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի ստախանովյան շարժման կապակցությամբ արդյունաբերության և տրանսպորտի աշխատանքի մասին վորոշման կատարումը պահանջում է կուսկազմակերպություններից, առաջին հերթին արդյունաբերական և տրանսպորտային կուսկազմակերպություններից (Բաքվի, Թիֆլիսի, Ճիաթուրի, Լենինականի և մյուսները) ուժեղացնել կուսկազմակերպությունների ղեկավարությունն ստախանովյան շարժման ծավալման ամբողջ գործի նկատմամբ: Ստախանովյան շարժման ղեկավարման գործում կուսկազմակերպությունների խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի վճռականորեն հաղթահարել պահպանողական ու դասակարգայնորեն թշնամի տարրերի կողմից ստախանովյան շարժմանը ցույց տրվող դիմադրությունն ամեն տեսակի տարրերը, մեր արդյունաբերության ու տրանսպորտի առաջավոր մարդկանց օրինակելի աշխատանքի նմուշները վեր հանել, նրանցով դաստիարակել ու կազմակերպել բանվորների և կոլտնտեսականների ա–



վելի ու ավելի լայն մասսաներին, ստախանովյան շարժման մեջ ներգրավել բոլոր կոմունիստներին ու կոմյերիտականներին՝ բարձրացնելով նրանց ավանգարդային դերը, ավելի լավ կազմակերպել տեխուսուցումը ձեռնարկություններում և առաջին հերթին կոմունիստների ու կոմյերիտականների տեխուսուցումը, այնպես, վոր յուրաքանչյուր կոմունիստ ու կոմյերիտական 1936 թվի ընթացքում տա տեխմինիմումի պետքննությունը՝ իր մասնագիտության ու աշխատանքի կվալիֆիկացիայի համաձայն, և այդ հիման վրա ապահովել 1936 ստախանովյան տարվա համար կուսակցության տված պլանների ու առաջադրությունների կատարումը և գերակատարումը:

---

Անդրյերկոմի պլենումը վստահեցնում է Համկոմկուսի (բ) Կենտկոմին և կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինին, վոր անդրկովկասյան կուսկազմակերպությունները, անսահման նվիրված Լենինի – Ստալինի գործին, հաշվի առնելով կուսփաստաթղթերի ստուգումից բխող դասերը, օրինակելի կերպով կկատարեն կուսակցական տոմսերի փոխանակումը և այսուհետև ել ամրապնդելով կուսկազմակերպությունների շարքերը, բարձրացնելով կազմակերպչական աշխատանքը քաղաքական խնդիրների մակարդակին, դաստիարակելով յուրաքանչյուր կոմունիստի ստալինյան անհաշտվողականության, զգաստության ու յերկաթե կարգապահության վոգով, կհասնեն Անդրկովկասի հանրապետությունների բոլոր կոմունիստների ու աշխատավոր մասսաների ե՛լ ավելի համախմբմանը կուսակցության գլխավոր գծի շուրջը, Համկոմկուսի (բ) Կենտկոմի և ժողովուրդների սիրելի առաջնորդի, սոցիալիստական հաղթանակների կազմակերպչի, մեծ Ստալինի շուրջը:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ Арм. ССР
и. им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
40780-65

## ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԱՎԹԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

### ՀԱՄ. Կ (Բ) Կ ԱՆԴՐԵՐԿՈՄԻ 4-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԸ

(1936 թ. 4 փետրվարի)

Ստախանովականների համամիութենական խորհրդակցությունում ընկեր Ստալինի արտասանած ճառը և ստախանովյան շարժման առնչությամբ արդյունաբերության ու տրանսպորտի հարցերի վերաբերմամբ Համկոմկուսի (բ) Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի վորոշումներն ամենալայն ուղիներ են բաց անում մեր յերկրում սոցիալիստական շինարարության հետագա զորեղ զարգացման համար, պայմաններ ստեղծելով՝ սոցիալիզմից կոմունիզմի անցման համար:

Բուռն կերպով զարգացող ստախանովյան շարժումը, վոր հետևանք է խորհուրդների յերկրում սոցիալիզմի հաղթանակի, ստեղծում է աշխատանքի այն բարձր արտադրողականությունը, վորը Լենինն ամենակարևորը, ամենագլխավորն էր համարում նոր հասարակակարգի հաղթանակի համար:

Աշխատանքը «ամոթալի ու ծանր բեռ լինելուց, ինչպիսին նա առաջ էր համարվում, դարձել է պատվի գործ, փառքի գործ, սխրագործության ու հերոսության գործ» (ՍՏԱԼԻՆ):

Ստախանովյան շարժումը, վոր կոչված է մեր արդյունաբերության մեջ հեղափոխություն առաջ բերել և լայն ալիքով ընդգրկել է մեր ամբողջ յերկիրը, ծավալվում է նաև Ադրբեջանի նավթային արդյունաբերության մեջ:

Նավթային հնգամյակը յերկու և կես տարում կատարելը, վերջին տարիներս նավթի հանույթի աճման շոշափելի տեմպերը (1930 թվին միջին օրական հանույթը — 29.518 տոնն, 1935 թվին — 53.000 տոնն), նավթային արդյունաբերության տեխնիկական վերակառուցումը, առաջավոր տեխնիկայի, չափման ու ավտոմատիկ պրիբորների արմատացումը, նոր տեխնիկային տիրապետող հարյուրավոր ու հազարավոր բանվորների ու ինժեներա-տեխնիկական աշխատողների պետական տեխքննություն բռնելը, վերջապես նավթագործների լայն մասսաների կուլտուրական-կենցաղային բարեկեցության աճը (1934 թ. հորատման, հանույթի և վերամշակման մեջ միջին ամսական աշխատավարձը—197 ռուբ., 1935 թ.—242 ռուբ., իսկ 1935 թվի նոյեմբերին—274 ռուբլի) նախադրյալներ հանդիսացան նավթային արդյունաբերության մեջ ստախանովյան շարժման զարգացման համար:

Արդեն իսկ այժմ հազարավոր ստախանովական-նավթագործներ աշխատանքի բարձր արտադրողականության և արտադրության նոր յեղանակով կազմակերպման օրինակներ են ցույց տալիս:

Այսպես օրինակ, Լենինյան հանքի հորատող վարպետ Իսմայիլ Միքայիլը № 830 հորում մի ստանոկ-ամսում տվել է 745 մետր արագություն.

Ադրբեջանի նավթային արդյունաբերության մեջ ստախանովյան շարժման նախաձեռնող Զ. Վ. Գարֆյանովը № 754 հորում մի ստանոկ-ամսում 534 մետր արագություն է ցույց տվել, նորմայով նախատեսված 406 մետրի դիմաց.

Ազիզբեկովի անվան հանքում հորատող վարպետ Շիշկանովը 1690 մետր խորությամբ հորում մի ստա-

նոկ–ամսում 712 մետր արագություն է ցույց տվել։

Իլիչի Բուխտա հանքի հորափոր վարպետ Իշմաեվը 538,2 մետր արագությամբ № 1263 հորն ավարտել է ժամկետից 20 օր առաջ և հասել մեքենական հորափորման 45,7 տոկոսի։

Արտյոմի կղզու հորափոր վարպետ Ակինինը № 150 հորի ծովային հորափորման մեջ 419 մետրի արագություն է տվել, պլանը գերակատարելով 148 տոկոսով։

Կագանովիչի անվան հանքի հորափոր վարպետ–ինժեներ Բաբենկոն փոչ խոր հորափորման մեջ մի ստանոկ–ամսում 1.110 մետր արագություն է ցույց տվել։

Մամեդ Ամիր Հյուսեյինը — Զըխի նոր հանքում 1750 մետր խորությամբ հորում մի ստանոկ ամսում 540 մետր արագություն է ցույց տվել։

Ալիբրեկովի անվան հանքի չահագործման բրիգադիր՝ Խան Մուրադը պլանը գերակատարում է 185 տոկոսով։

Բալախանու հանքի խորաքաչ նասոսային չահագործման բրիգադիր Աբութալիբ Խան Դադաշը պլանը գերակատարում է 180–200 տոկոսով։

Լենինյան հանքի կոմպրեսորային չահագործման բրիգադիր Պանյուշևը պլանը գերակատարում է 150–200 տոկոսով։

Ստալինի անվան գործարանի թորող Գամզինը 337 կիլոգրամ նորմա ունենալով, տալիս է 455 կիլոգրամ արտադրանք։

Պյատակովի անվան գործարանի դոման տեղակայումի բրիգադիր Ամիր Քերիմն օրական 150 տոնն նորմա ունենալով, տալիս է 245 տոնն ելեկի յուղ։

Զայկինը Բուդյոննու անվան գործարանում՝ ապարատուրայի մի խորանարդ մետրից 29,2 կիլոգրամ վերցնելու նորմա ունենալով, ստանում է 30,8 կիլոգրամ արտադրանք։



Նեվթեգազվորսարոյի փականագործ Բասմգարանը նորման գերակատարում է 700 տոկոսով։

Շմիդտի անվան գործարանի պողպատաձույլ Մաքարովը՝ ամեն մի քառակուսի մետրից 3,3 տոնն նորմա ունենալով, տալիս է 7,3 տոնն։

Ձերժինսկու անվան գործարանի խառատ Դոնսկոյը նորման գերակատարում է 300 տոկոսով։

«Բակինսկի Ռաբոչի» գործարանի դարբին Սոյթովը՝ դեկտեմբերին նորման կատարել է 314 տոկոսով։

Աշխատանքի արտադրողականության բարձր ցուցանիշներ են տալիս նույնպես

Մ. Ն. Պետրոսյանը — Իլիչի Բուխտայի հորափոր վարպետ,

Թաղի Մարդան Ռախմատուլին — Իլիչի Բուխտայի չահագործման յերկրորդ պրոմսայի ռեմոնտարոյի բրիգադիր,

Ցե. Գ. Սիրոտովան — Իլիչի Բուխտայի կավագործարանի կավախառնիչ,

Մինդելի Ցախրետդինովը—Բալախանու հանքի հորափոր,

Ա. Ի. Գորդեևան—Կարլ Մարքսի անվան ելեկտրատոկի խառատ–ռևոլվերշչիցա,

Ֆ. Վ. Բրկովը—Լենինյան հանքի առաջին գրուպայի վարիչ,

Հասան Խան Մամեդը—Լենինյան հանքի կոմպրեսորային բրիգադի բրիգադիր,

Մ. Ա. Սուաքելովը—Օրջոնիկիձեյի անվան չըջանի Ստալինի անվան գործարանի խառատ,

Բաբա Կաֆար Մուրադովը—Օրջոնիկիձեյի անվան հանքի հորափոր վարպետ,

Մ. Ֆ. Տարականովը—ինժեներ, վորն իբրև հորափոր վարպետ աշխատում է Օրջոնիկիձեյի անվան հանքում,

Կամեր Ագեր կըզի Ռահիմովան — Օրջոնիկիձեյի անվան հանքի խորաքաչ նասոսային չահագործման ինժեներ։

Ահադ Մահուբը—Ալիբեկովի անվան հանքի հորատոր վարպետ,

Մամեդ Ալիեր—Սուրախանի հանքի մոնտաժային ցեխի շինարարության գործոդ-վարկանադործ,

Ի. Գարկուշան — Կագանովիչի հանքի հորատոր վարպետ,

Սուլթան Նուրիյեվը—ինժեներ՝ Կագանովիչի անվան հանքի հորատոր վարպետ,

Ա. Ա. Մինիբաեր — Ադնեվթեսնաբի Հանքային ձեռնարկությունների վարչության ուղու ծառայության ռեկլոերը միացնող,

Ն. Տ. Իտնովը—«Կրասնայա զվեզդա» էլեկտրակայանի ավագ վարպետ,

Վ. Ի. Ռեչետովը—Շմիդտի անվան գործարանի օբրուբշչիկ,

Կուլամ Հեյդարը — Ռիկովի անվան գործարանի դարբին,

Աղա Միրզա Բագիրովը—Բուդյոննու անվան գործարանի Ֆրեզերովշչիկ և Ադրբեջանի նավթային արդյունաբերության ուրիշ շատ ստախանովականներ:

Առ 15-ը հունվարի Ադրբեջանի նավթային արդյունաբերության մեջ ստախանովականների թիվն արդեն անցել է 4300 հոգուց (բանվորների ընդհանուր թվի 15,5 տոկոս, հիմնական ճյուղերում 40 տոկոս):

Սակայն Համկոմկուսի (բ) Անդրկովկասյան Երկրային կոմիտեի պլենումը լիովին ճիշտ է համարում Համկոմկուսի (բ) Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի ցուցմունքն այն մասին, որ նավթային արդյունաբերության մեջ «ստախանովյան շարժումը զարգացած չէ»:

Բաքվի կուսակցական, տնտեսական ու պրոֆմիութենական կազմակերպությունները մեր երկրում ստախանովյան շարժման զարգացման սկզբնական շրջանում ուշադրություն չեն դարձրել և թույլ են ղե-



կավարել նավթային արդյունաբերության մեջ ստախանովյան շարժման զարգացմանն ու վերելքին:

Համկոմկուսի (բ) Անդրերկկոմի պլենումը մատնանշում է, որ այժմ էլ՝ Համկոմկուսի (բ) Կենտկոմի դեկտեմբերյան պլենումից հետո, նավթային արդյունաբերության մեջ, չնայած արդեն ունեցած մի քանի աջողությունների, ստախանովյան շարժումը դեռ բավականաչափ չի զարգացած:

Բոլշևիկ – նավթագործների խնդիրը կայանում է նրանում, որ լիովին օգտագործելով արդեն վերջին ամիսները կուտակված փորձը, նավթային արդյունաբերության բոլոր ճյուղերում՝ գլխավորել ստախանովյան շարժումը, ջախջախել մինչև վերջը կոնսերվատիվ տարրերի կողմից ստախանովյան շարժմանը ցույց տրվող դիմադրությանը և ստախանովյան շարժումը զարգացնել լայնությամբ ու խորությամբ:

Այդ խնդիրը աջողությամբ կարող է լուծվել միայն այն դեպքում, եթե Բաքվի կուսակցական ամբողջ կազմակերպությունը, բոլոր բոլշևիկ նավթագործները—կուսակցական և ոչ կուսակցական—վճռական պայքար մղեն թափթփվածության ու դատարկաշրջիկության դեմ, աշխատանքի մեջ ամենախիստ կարգապահության և ճշգրտության համար, առկա սարքավորման տեխնիկական հնարավորությունների մաքսիմալ օգտագործման համար, աշխատանքի ստախանովյան նոր մեթոդների համար:

1. Համկոմկուսի (բ) Անդրերկկոմի պլենումը գտնում է, որ գլխավոր ուշադրությունն առաջին հերթին պետք է դարձվի ստախանովյան շարժման զարգացման վրա Ադրբեջանի նավթային արդյունաբերության հետևյալ բնագավառներում —

ա) Հորատողության մեջ՝ նրա տեմպերն արագացնելու և փորակն ավելի լավացնելու նպատակով.

բ) շահագործման մեջ՝ նավթի հանույթն ամեն մի հորի նկատմամբ մեծացնելու համար.

գ) նավթավերամշակման մեջ՝ ամեն մի տոնն նավթի պարզ մթերքների ընտրանքի խորությունը մեծացնելու համար.

դ) նավթային մեքենաշինության մեջ՝ բարձր որակի սարքավորումով նավթային արդյունաբերությունն ավելի լավ ապահովելու համար.

յե) էներգետիկ ձեռնարկություններում՝ էլեկտրաէներգիայի մշակումը մեծացնելու, խնայողաբար և ռացիոնալ կերպով այն ծախսելու նպատակով.

զ) օժանդակ տնտեսության և շինարարության մեջ՝ հորատման և նավթահանության սպասարկումն ավելի լավ կազմակերպելու համար:

2. Հորատման մեջ ստախանովյան շարժումը պետք է ուղղված լինի փորման մաքսիմալ արագություններին հասնելուն՝ հորատման որակական բոլոր ցուցանիշները լրիվին պահելով հանդերձ, որ շահագործման տրվեն հնարավորին չափ մեծ քանակությամբ հորեր և իջեցվի նրանց ինքնարժեքը: Նշելով Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի պլենումի՝ մեխանիկական հորատումը (ծակելը) փորման ընդհանուր ժամանակի 35—40 տոկոսին հասցնելու մասին կայացրած որոշումների չկատարելը, Անդրյերկոմի պլենումը գտնում է, որ հենվելով այդ ցուցանիշներից արդեն անցնող ստախանովական — հորատորների փորձի վրա, Ազնեֆթտրեստների բոլոր հորատորպարտիաները պետք է հասնեն այդ առաջադրանքի անպայման գերակատարմանը: Մեխանիկական հորատման արագությունը մեծացնելու նպատակով՝ հանձնարարել ստախանովականների փորձով արդեն ստուգված ռոտորների պտույտների թիվը և նասոսների մեջ անցումների թիվը մեծացնել: Բոլոր նոր գործարկվող հորերում Գրոզնու վերնահարթակներ ունենալ՝ փորող խողովակները հաստատելու համար, հատուկ հորեր փորել յերկխողովակի ու քառակուսու համար, այլև բոլոր հորերում լայնորեն արմատացնել գրաֆիտային քսվածքը և լեբյոդկայի ամբողջ արագությունը լրիվին օգտագործել իջեցնելու և բարձրացնելու գործողություններն արագացնելու համար: Մինչև այս տարվա մարտի մեկը հարցը մշակել, իսկ առանձին նավթահանքերում կազմակերպել փորման գրուպաների լրիվին ազատումն օժանդակ աշխատանքներից՝ այդ վերջինները մոնտաժա — գործիքային բաժիններին հանձնելով: Առաջարկել նավթային բոլոր տրեստներին այն ձևով համալրել փորման պարտիաները, որ ամեն մի հերթափոխության բանվորների ակա կազմը լրիվին ապահովի հորատորպարտիայի մեխանիկական ու էլեկտրական տնտեսության սպասարկումը:

3. Շահագործման մեջ ստախանովյան շարժումը պետք է ուղղվի նավթի հանույթն ամեն մի հորից մաքսիմալ չափով մեծացնելուն և հանած նավթի ինքնարժեքն իջեցնելուն՝ հորերի պարապուրդի սուր կրճատումով, կոմպրեսորային պարկի կարողության լրիվին օգտագործումով, բաշխման ցանցում օդի կորուստն իջեցնելով և ստախանովյան բրիգադների փորձի հիման վրա խորաքաշ նասոսային ու կոմպրեսորային հորերի շահագործման կանոնավոր ռեժիմը կազմակերպելով: Խորաքաշ նասոսային շահագործումը փետրվարի ընթացքում ավելի լավացնելու նպատակով վերանայել բոլոր խորաքաշ նասոսային հորերը, որ ձեռք բերվի կաչալկաների ճոճման ամենանպաստավոր թիվը, յերկարացվի նասոսների ընթացքն ու տրամագծի համապատասխան փոփոխումն այն ձևով, որ աջողվի հասնել նասոսների առնվազն 0,7-ով լցնելու գործակցին: Հորերը նորոգելու ժամանակ վերամբարձ գործողությունների իջեցման արագությունը մեծացնելու համար ուշադրություն դարձնել տալերի համապատասխան սարքման և ամբարձակ — տրակտորների բոլոր արագությունները լրիվին օգտագործելու

վրա: Կոմպրեսորային պարկն ամենալավ կերպով օգտագործելու նպատակով առաջին կիսամյակի ընթացքում հաստատված կոմպրեսորների կարողությունների ծավալը 15–20 տոկոսով մեծացնել ի հաշիվ կոմպրեսորների պտույտների թվի մեծացման և նրանց լցվածքի գործակցի մեծացման: Վորակյալ բանվորական ուժն ոժանդակ աշխատանքներից ազատելու նպատակով, նավթահանքերում ստեղծել հատուկ նախապատրաստական բրիգադներ, վորոնց հանձնարարել աշխատանքի տեղերը, գործիքները և այլն պատրաստելու ամբողջ աշխատանքը:

4. Նավթավերամշակման արդյունաբերության մեջ ստախանովյան շարժումը պետք է ուղղվի վերամշակման պլանների գերակատարմանը՝ ի հաշիվ ապարատուրայի միավորից պատրաստի տարեկան արտադրանքի բարձրացումը մեծացնելու, պարզ մթերքների ընտրանքի խորացման մեծացմանը, վառելիքի կորուստների ու ծախսերի իջեցմանը և արտադրանքի ինքնարժեքի իջեցմանը:

Այդ նպատակով — արտադրության համակենտրոնացումն անցկացնել ամենից ավելի խոշոր, տեխնիկական առաջավոր տեղակայումներում: Մոտորային վառելիքի, այլև կրեկինգ-գործարանների կոնդենսիոն հումքի մեծացման համար բարձրացնել խորհրդային նոր տրուբչատկաների վառարանների ջերմային ռեժիմը: Պարզ մթերքների, առանձնապես լիգրոյինի մաքսիմալ ստանալու համար, ապրանքային մթերքների բաղկացուցիչ կոմպոնենտները մշակել ամեն մի տեղակայումի առանձնահատկությունների համապատասխան կերպով և այդ կոմպոնենտների տեղափոխումը կատարել գործարանների ընդհանուր-ապրանքային տնտեսության մեջ: Ստալինի անվան գործարանում բենզին-լիգրոյինի գծման բաժնի կարողությունը 1936 թ. առաջին յեռամսյակին հասցնել օրական 2700 տոննի, իսկ յուղի գծման գործարանի



կարողությունը 1936 թ. առաջին կիսամյակում՝ 3000 տոննի: Բաքվից Բաթում նավթի յերկաթուղային փոխադրումները քչացնելու համար առաջին կիսամյակի ընթացքում մեծացնել Բաքու-Բաթում 8 դյույմանոց նավթանցքի թողունակությունը՝ նրա ճնշումը մեծացնելու միջոցով: Վճռական միջոցներ ձեռք առնել իջեցնելու կորուստը տեղափոխումներում նավթամթերքները պահելու և մղելու ժամանակ:

5. Նավթային արդյունաբերության մեջ ստախանովյան շարժումը պետք է ուղղված լինի առաջին հերթին մեքենայի և բանվորական ուժի լավագույն օգտագործմանը, մեքենական ժամանակի օգտագործման բարձրացմանը, թողարկվող արտադրանքների վորակի վճռական բարձրացմանը, արտադրական ծրագրի գերակատարմանը և ինքնարժեքի իջեցմանը: Մեքենաշինարարները պարտավոր են խիստ բարձրացնել ինչպես նոր, այնպես հիմնական նորոգումից թողարկվող սարքավորման վորակը և մեծացնել դրանց ծառայության ժամանակը, սարքավորում, վորը մինչև այժմ սահմանավորել է հորափորական պարտիաների և շահագործման աշխատանքը: Անհրաժեշտ է հասնել 130–150 տոննանոց վերտլյուգների այնպիսի վորակի, վորպեսզի յուրաքանչյուրն ապահովի առնվազն մեկ խորը նավթահորի անհերթափոխ անցքավորումը: Խոբաքարշ նասոսների ծառայության միջին ժամկետը պետք է լինի վոչ պակաս 4–5 ամսից: Պարտավորեցնել Ադնեֆթեմաշին սարքավորման և պահեստի մասերի արտադրության պրոցեսում լրիվին օգտագործելու փորձով ստուգված այն ռացիոնալիզատորական առաջարկությունները, վորոնք մշակված և կիրառված են հորափորության ու շահագործման ստախանովականների կողմից:

6. Ենէրգետիկական այն ձեռնարկություններում, վորոնք սպասարկում են Ադրբեջանի նավթային արդյունաբերությունը՝ ստախանովյան շարժումը պետք

է ուղղված լինի էլեկտրիկայանների կարողությունների ավելի լավ և ավելի լրակատար օգտագործմանը՝ էլեկտրաէներգիայի մշակումը մեծացնելու, առանց ավարիայի աշխատանքի, էլեկտրաէներգիայի կորուստի խիստ կրճատման համար այն նավթահանքերին, գործարաններին, ագրեգատներին ու նրանց ներսում տալու ժամանակ, էլեկտրաէներգիայի ավելի խնայողական ու ռացիոնալ օգտագործմանն ամբողջ նավթային տնտեսության մեջ և վառելիքի ծախսման կրճատմանը:

7. Ոժանդակ ձեռնարկություններում և բուրգային կառուցման մեջ ստախանովյան շարժումը պետք է ուղղված լինի այս ձեռնարկություններում աշխատանքի կազմակերպմանն այնպիսի ձևով, վորպեսզի լրիվին բավարարվեն նավթարդյունաբերության հիմնական ճյուղերի՝ ստախանովյան շարժման կապակցությամբ բարձրացած կարիքները: Ստախանովյան շարժումը հորատորության սարքավորումը հավաքելու և քանդելու բնագավառում պետք է ուղղված լինի աշխատանքի վորակի խիստ բարելավմանը, նրա ինքնարժեքի իջեցմանը և բուրգերի կառուցումն հորատորության սարքավորման հավաքումն իր ժամանակին չկատարելու պատճառով առաջացող հորատորական պարտիաների յերկարատև պարապուրդների վերացմանը: Հորատորական ստանոկի հավաքումը պետք է տևի մաքսիմում յերկու և կես որ: Առաջին յեռամսյակի ընթացքում բուրգային կառուցման մասնակի ստանդարտից անցնել լրակատար ստանդարտին և բուրգերի ստանդարտ մասերը կառուցման վայրը պատրաստի ձևով տեղափոխելուն: Մինչև մայիսի 1-ն աջողացնել ռոտորական տիպի բուրգերի կառուցումը 3–5 որից վոչ ավելի ժամկետում, իսկ գերաղանց խորը հորատորության բուրգերինը՝ 5–7 որում: Դուրային տնտեսության մեջ անհրաժեշտ է հասնել աշխատանքի բարձր վորակի, վորն ապահովի դուրի առավելագույն անցնելը մեկ նվազ փորելիս: Հարկավոր է մոտակա խնդիր համարել հորի մեջ դուրի դիմացկունությունը մինչև 50–60 ժամվա աշխատանքի հասցնելը: Վորակավորված զոդողներին ազատել բոլոր ոժանդակ աշխատանքներից և նրանց տեղափոխել բացառապես դուրերի զոդման վրա: Լայնորեն ոգտագործել դուրերի զոդման մեթոդների և ձևերի մեջ առանձին զոդողների պրակտիկայում ստուգված նվաճումները: Բոլոր մոնտաժաինստրումենտալ բաժիններում փետրվարի ընթացքում ջոկել հատուկ նախապատրաստական բրիգադներ՝ ամբողջ մոնտաժի յենթարկվող սարքավորման պլանային — նախազգուշական ու ընթացիկ նորոգումը կատարելու և աշխատանքի տեղերը գործիքներով ու ոժանդակ սարքավորումով մատակարարելու համար:

8. Անդրյերկոմի պլենումն անհրաժեշտ է համարում Ադրբեջանի նավթային արդյունաբերության մեջ այժմ գոյություն ունեցող տեխնիկական նորմաները, վորպես հնացած նորմաներ, փոխարինել ավելի բարձր նորմաներով և փոփոխել մշակման համապատասխան նորմաները՝ դրանք վորոշ չափով բարձրացնելու ուղղությամբ: *Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի պլենումը միանգամայն սխալ է համարում մշակման նորմաներ սահմանելու այն սիստեմը, վորը գոյություն ունի ներկայումս Ադրբեջանի նավթային արդյունաբերության մեջ: Այս աշխատանքն անցկացնելիս չա անմիջական մասնակցություն են ունեցել ինժեներա-տեխնիկական և վարչա-տնտեսական կադրերը, գրուպաների, ցեխերի և բրիգադների ղեկավարները: Այս աշխատանքին մասնակցելու համար միանգամայն անբավարար են ներգրավվել առաջավոր-ստախանովականները: Տեխնորմաների և մշակման նորմաների վերանայման համար ամբողջ նախապատրաստական աշխատանքը կառուցված չի յեղել համապատասխան առանձին հանքերի պայմանների:*

Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի պլենումն առաջարկում է Ազնեֆթեկոմբինատին և նավթատրեստներին անհապաղ ապահովել այս սխալների ու բացերի ուղղումը, վորոնք թույլ են տրված նորմաների վերանայման ուղղությամբ անցկացված նախապատրաստական աշխատանքում:

Պլենումը պարտավորեցնում է նավթային արդյունաբերության բոլոր կուսակցական, տնտեսական և պրոֆմիութենական կազմակերպություններին՝ տեխնիկական նորմաների ու մշակման նորմաների վերանայման նախապատրաստության ուղղությամբ տարվող աշխատանքում ապահովել արտադրության բոլոր հրամանատարների, ինժեներա-տեխնիկական աշխատողների, ցեխային վարպետների, հորափորության վարպետների, ընդերկրյա նորոգման վարպետների և լավագույն ստախանովականների մասնակցությունը:

Պլենումը պարտավորեցնում է նավթատրեստների դիրեկտորներին մի ամիս ժամանակում վերանայել այն կադրերը, վորոնք աշխատում են նորմավորման գծով, հեռացնելով այդ աշխատանքից անպետք և անորակ մարդկանց, ու այդ ժամանակամիջոցում կատարել վորակավորված և տեխնիկապես պատրաստված նորմավորողների ընտրությունը:

Պլենումը պարտավորեցնում է նավթատրեստների և նավթահանքերի դիրեկտորներին անձամբ ամեն որ ղեկավարել տեխնիկական նորմավորման աշխատանքը, հրահանգել նորմավորողների կադրերին, կազմակերպել հատուկ դասընթացներ նորմավորողների վերապատրաստման համար՝ վորակավորված ինժեներա-տեխնիկական աշխատողների ղեկավարությամբ:

Մատնանշելով, վոր նավթային արդյունաբերության բանվորների կազմի մոտ կեսը գտնվում է վարձատրման ժամանակավարձային սիստեմում և բանվորների միայն 20–25 տոկոսը՝ պրոգրեսիվ գործարքի



սիստեմում,—Անդրյերկոմի պլենումն առաջարկում է նավթատրեստների ու ձեռնարկությունների դիրեկտորներին, Կովկասի նավթահանքերի Միության կենտկոմի հետ միասին, մի ամիս ժամկետում վերանայել բանվորների ու ինժեներա-տեխնիկական աշխատողների աշխատավարձի սիստեմը, այն հաշվով, վորպեսզի աշխատավարձի նոր սիստեմը մաքսիմալ չափով խթանի ստախանովյան շարժումը և աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացումը: Աշխատավարձի նոր սիստեմը պետք է նախատեսնի նավթատրեստների բանվորներին պրոգրեսիվ գործարքի մեջ ընդգրկելու մաքսիմալ ընդլայնումը:

9. Յելնելով Համկոմկուսի (բ) Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի վորոշումներից, Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի պլենումն անհրաժեշտ է գտնում նավթագործ-բանվորների տեխնիկական ուսուցումը կազմակերպել այն հաշվով, վորպեսզի 1936–1937 թվերի ընթացքում ադրբեջանյան նավթային արդյունաբերության բոլոր բանվորները տան պետական տեխքննությունները և շարունակեն աշխատել իրենց կուլտուր-տեխնիկական մակարդակի հետագա բարձրացման ուղղությամբ:

Այս կապակցությամբ, Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի պլենումը 1936 թվի համար սահմանում է բանվորներին տեխուսուցման մեջ ընդգրկելու հետեվյալ առաջադրանքը·

Նավթատրեստների գծով· տեխմինիմումի խմբակներում՝ 11·500 հոգի, բարձր տիպի (ստախանովյան) դասընթացներում՝ 4·100 հոգի, սոցիալիստական աշխատանքի վարպետների դասընթացներում՝ 550 հոգի, ինժեներա-տեխնիկական աշխատողների վորակի բարձրացման ինստիտուտում՝ 2·500 հոգի:

Ազնեֆթեզավոդների գծով· տեխմինիմումի ուսուցման յենթակա բանվորների շրջանն ընդլայնել 250-ից մինչև 325 կվալիֆիկացիայի՝ այն հաշվով, վորպեսզի

1936 թվին բոլոր վորակավորված և կիսավորակավորված բանվորներն անցնեն տեխմինիմումով ու պետտեխքննությունով: 1935 թվին տեխմինիմում և պետտեխքննություն անցած բանվորների համար տեխուսուցումը կազմակերպել բարձր տիպի խմբակներում, սահմանելով 3000 սովորողների կոնտինգենտ: Իսկ առաջատար պրոֆեսիաների ստախանովականների համար կազմակերպել սոցիալիստական աշխատանքի վարպետների դասընթացներ՝ 250 հոգու ընդգրկումով:

Այնեվրթեմաշի գծով. 1936 թվին կազմակերպել տեխմինիմումի խմբակներ 250 հոգու համար, տեխնիկական խմբակներ 950 հոգու համար, արտադրա-տեխնիկական դասընթացներ՝ 700 հոգու համար և ինժեներա-տեխնիկական աշխատողների վորակի բարձրացման դասընթացներ՝ 100 հոգու համար:

Այնեվթեկոմբինատին, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին ու Բաքկոմին՝ մի տասնօրյա ժամկետում մշակել կիրառել տեխուսուցման պլանն Այնեվթեռազվեդկայի տրեստի բանվորների մեջ և Ադրբեջանի նավթային արդյունաբերության օժանդակ ձեռնարկություններում:

Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի պլենումը պարտավորեցնում է Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին և Բաքկոմին ու Այնեվթեկոմբինատին՝ մշակել տեխուսուցման համար համապատասխան դասագրքերի հրատարակության հարցը և մանավորապես կատարել Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի վորոշումը հորատորության վերաբերյալ տեխնիկապես գրագետ դասագրքի հրատարակման մասին:

Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի պլենումը պարտադիր է համարում տեխուսուցման խմբակներում դասավանդման մեջ նավթատրեստների ամբողջ վորակավորված ինժեներա-տեխնիկական անձնակազմի ներգրավումը և հանձնարարում է տնտեսական ու կուսակցական կազմակերպություններին, ստեղծելու բո



լոր անհրաժեշտ պայմանները տեխուսուցման պարապմունքների նորմալ ընթացքի համար: Ադրկոմկուսի (բ) Բաքկոմին և շրջանային կուսկազմակերպություններին՝ ամենօրյա վերահսկողություն սահմանել տեխուսուցման ընթացքի վրա: Նկատի ունենալով այն, վոր անգրագետների ու կիսագրագետների զգալի տոկոսի առկայությունն արգելակում է տեխուսուցման լայն զարգացումը, առաջարկել Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին ու Բաքկոմին, 1936 թ. լիովին վերացնել այբբենական անգրագիտությունն ու կիսագրագիտությունը նավթային բանվորների մեջ, այն հաշվով, վորպեսզի 1937 թվին նրանք էլ ընդգրկվեն տեխուսուցման մեջ:

10. Պլենումը գտնում է, վոր ստախանովյան շարժման զարգացումը պահանջում է արտադրության տնտեսա-տեխնիկական ղեկավարման բարելավումն ու վերակառուցումը: Պլենումը մատնանշում է, վոր նավթային արդյունաբերության ինժեներա-տեխնիկական աշխատողների զգալի մասը դեռ չի վերակառուցել իր աշխատանքն այն նոր խնդիրների համաձայն, վորոնք դրված են նրանց առաջ ստախանովյան շարժումով: Տնտեսական ղեկավարները պարտավոր են ապահովել պլանային առաջադրանքի կատարման ուշադիր և ժամանակին նախապատրաստությունը յուրաքանչյուր աշխատանքային տեղում յուրաքանչյուր վախտի, բրիգադի, հերթափոխի և գրուպայի համար, կազմակերպել յուրաքանչյուր բանվորին ստախանովյան ձևով աշխատանքի յուրացման մեթոդների հրահանգումն ու ցուցադրումը, ոգնել բրիգադներին աշխատանքի ճիշտ, բարձր արտադրողականություն ապահովող կազմակերպման և ագրեգատների ուսումնասիրման մեջ:

Անդրյերկոմի պլենումը՝ նավթային արդյունաբերության բոլոր ինժեներա-տեխնիկական աշխատողների առաջ խնդիր է դնում՝ ուսումնասիրել ու ընդհանրացնել ստախանովականների աշխատանքի փորձը և

նրանց աշխատանքի փորձի հետ ծանոթացնելու բոլոր բանվորներին:

Անդրյերկոմի պլենումը պարտավորեցնում է նավթահանքերի դիրեկտորներին և շահագործման ու հորախորության գրուպաների վարիչներին, ձեռնարկությունների դիրեկտորներին և բոլոր ինժեներա-տեխնիկական աշխատողներին՝ վճռականորեն բարելավել տեխնիկական հաշվառման կազմակերպումը, անընդհատ հսկողությամբ ընդգրկել այն բոլոր ցուցանիշները, վորոնք բնորոշում են սարքավորման օգտագործումը (ստոլի պտույտների թվի հաշվառումը, նասոսի ճնշումը, կոմպրեսորի արտադրողականությունը և այլն), այլև ապահովել յուրաքանչյուր վախտի աշխատանքի պլանավորման և նրա աշխատանքի արդյունքների հաշվառման կազմակերպումը:

Անդրյերկոմի պլենումն առաջարկում է Ազնեֆթկոմբինատին՝ մի ամիս ժամկետում ուսումնասիրել վախտերի պետերի ինստիտուտի հորախորության և շահագործության մեջ ներմուծելու փորձը և հանձնարարում է Ադրկոմկուսի (բ) Բաղկոմին մի ամսից հետո քննություն առնել այդ փորձը նավթային արդյունաբերության բոլոր նավթահանքերում տարածելու նպատակահարմարության հարցը:

Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի պլենումը մատնանշում է, վոր Ադրբեջանի նավթային արդյունաբերության մեջ մինչև հիմա չի կատարված Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի վորոշումը՝ շահագործման և հորախորության գրուպաները ինքնահաշվառքի փոխադրելու մասին: Պլենումը պարտավորեցնում է Ազնեֆթկոմբինատին՝ մի ամիս ժամկետում ստուգել ինքնահաշվառքի անցկացման դրությունը շահագործման և հորախորության գրուպաներում, ապահովելով այս հարցի վերաբերյալ Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի վորոշման լրիվ կիրառումը:

«Ստախանովյան շարժումը նշանավորում է աշխատանքի կազմակերպումը նոր ձևով, տեխնոլոգիական պրոցեսների ռացիոնալիզացումը, աշխատանքի ճիշտ բաժանումն արտադրության մեջ, վորակավորված բանվորներին յերկրորդական նախապատրաստական աշխատանքից ազատելը, աշխատանքի տեղի լավագույն կազմակերպումը, աշխատանքի արտադրողականության արագ աճման ապահովումը, բանվորների յեվ ծառայողների աշխատավարձի զգալի աճման ապահովումը»: Համկոմկուսի (բ) Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի վորոշումներում սահմանավորված այս խնդիրների կատարման տեսանկյուն տակ՝ պետք է վերակառուցվի արտադրության տնտեսական ու տեխնիկական ղեկավարումն ստախանովյան շարժման կապակցությամբ:

11. Անդրյերկոմի պլենումը պարտավորեցնում է Բագվի կուսկազմակերպությանը ուժեղացնել նավթային արդյունաբերության մեջ ստախանովյան շարժման զարգացման իր ղեկավարությունը: Ստախանովյան շարժման ղեկավարման մեջ կուսկազմակերպությունների գլխավոր խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի վճռականորեն հաղթահարեն ստախանովյան շարժման նկատմամբ յեղած դիմադրությունը պահպանողական և դասակարգային — թշնամական տարրերի կողմից, ամեն կերպ օգնեն տնտեսավարներին, ինժեներներին և տեխնիկներին վերակառուցելու և բարելավելու արտադրության տնտեսա-տեխնիկական իրենց ղեկավարումը, բարձրացնեն առաջավոր ստախանովականների աշխատանքի փորձը, լայնորեն տարածեն այն բանվորական մասսաների մեջ և առաջավորների փորձին մոտեցնեն բանվորների հետ մնացող խմբերին և վերջնականապես ստախանովյան շարժման մեջ ներգրավեն արտադրության մեջ զբաղված կոմունիստների ու կոմյերիտականների ամբողջ մասսային:

Պլենումը մատնանշում է, վոր նավթային ար–

դյունաբերության մեջ աշխատող կոմունիստներն ու կոմյերիտականները ներկայումս դեռևս բավարար չափով չեն ներգրավված ստախանովյան շարժման մեջ և հանձնարարում է Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին և Բագկոմին ու կուսակցության շրջկոմներին, լայն աշխատանք տանել կուսկազմակերպություններում կոմունիստներին ու կոմյերիտականներին ստախանովյան շարժման մեջ ներգրավելու, արտադրության մեջ նրանց ավանգարդային դերը բարձրացնելու ուղղությամբ:

Ստախանովյան շարժման զարգացման նկատմամբ կուսկազմակերպությունների ղեկավարության ուժեղացումը պետք է ամենից առաջ կայանա նրանում, որ արտադրության մեջ աշխատող կոմունիստներն ու կոմյերիտականները ցույց են տալու աշխատանքի բարձր արտադրողականություն, հանդիսանալու են ստախանովյան մեթոդների հիման վրա իրենց աշխատանքում լավագույն ցուցանիշներ տվող առաջավոր ստախանովականներ և իրենց աշխատանքի օրինակով իրենց հետևից են գրավելու բանվորների լայն մասսաներին:

12. Համաձայնություն տալով ադրբեջանյան նավթային արդյունաբերության մեջ փետրվարի 10-ից մինչև փետրվարի 20-ը ստախանովյան տասնօրյակ անցկացնելու մասին առաջավոր ստախանովականների առաջարկին, Անդրերկոմի պլենումը պարտավորեցնում է կուսակցական կազմակերպություններին, տնտեսական ղեկավարներին, պրոֆմիութենական և մյուս հասարակական կազմակերպություններին, իրագործել անհրաժեշտ նախապատրաստական միջոցառումներ ստախանովյան տասնօրյակն անցկացնելու համար, գլխավորել ստախանովյան շարժման այդ նոր վերելքը նավթային արդյունաբերության մեջ և դրանով իսկ ապահովել, ստախանովյան շարժման հիման վրա ադրբեջանյան նավթային արդյունաբերության հետագա աճն ու աշխատանքի բարելավումը:



Անդրերկոմի պլենումը հաստատապես վստահ է, որ Բագվի բոլշևիկները ու նավթագործները, ծավալելով ստախանովյան շարժումը, բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը, 1936 թվին ոչ միայն կկատարեն, այլև զգալիորեն կգերակատարեն կուսակցության և կառավարության կողմից հաստատված խորափորության ու նավթահանության պլանն Ադրբեջանի նավթային արդյունաբերության մեջ և շատ անգամով կծածկեն նավթահանության պակասահանույթը 1935 թվին:

Անդրերկոմի պլենումը վստահ է, որ ստախանովյան շարժման ասպարիզում և՛ս նավթային արդյունաբերությունը՝ վերացնելով գոյություն ունեցող հետ մնալը, դուրս կգա մեր սոցիալիստական հայրենիքի ժողովրդական տնտեսության առաջավոր ճյուղերի շարքը:

Гос. Библиотека ... ССР им. А. Мясникяна

Հայերեն խմբագրեց՝ Ս. ՇԱԽՈՒՆԻ
Տեխ. խմբագիր՝ Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ

Главлит № 1036. Заказ № 440 Азпартиздат 27. Тираж 5000. Тип. «III Интернационал» Баку, ул. Саратовца Ефимова, 29.

Аз. 1936 г.
Акт № 54
Вкладн. №

ՀՀ Ազգային գրադարան
NL0186948

12 ԿՈՊ.

247

Арм.
2-5612а

# РЕЗОЛЮЦИИ

## IV ПЛЕНУМА ЗАККРАЙКОМА ВКП(б)

2—4 февраля 1936 г.

Азпартиздат—Баку—1936.